

## 1. Մահմանումներ

Սույն Ընդհանուր Դրույթներ և Պայմաններում Կողմերը ընդունում են ներքոնշյալ տերմինները հետևյալ նշանակությամբ՝

### 1.1. Վաճառող / Կատարող

«ՑԵՊԵԼԻՆ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետությունում գրանցման իրավաբանական անձ, պետական գրանցման համարը՝ 286.110.05749, որը գործում է ՀՀ օրենսդրության և իր կանոնադրության հիման վրա:

### 1.2. Գնորդ / Պատվիրատու

Ցանկացած անձ ում հետ ստորագրվել է Հայտը:

### 1.3. Կողմ

Վաճառողը կամ Գնորդը առանձին հիշատակման ժամանակ:

### 1.4. Կողմեր

Վաճառողը և Գնորդը համատեղ հիշատակման ժամանակ:

### 1.5. ԸԴՊ

Սույն Ընդհանուր դրույթները և պայմանները:

### 1.6. Հայտ

Գնորդի և Վաճառողի միջև ստորագրված փաստաթուղթ, որով Գնորդը միանում է ԸԴՊ-ին: Հայտում սահմանվում է Գնորդի տվյալները, վճարման կարգը, Գնորդի լիազորված անձի տվյալները և Կողմերի համաձայնությամբ այլ անհրաժեշտ տեղեկություններ և պայմաններ:

### 1.7. Պայմանագիր

Կողմերի միջև ստորագրված Հայտը, ԸԴՊ-ն, և նույն առարկային վերաբերյալ Կողմերի միջև ստորագրված այլ հավելվածները և համաձայնագրերը միասին:

### 1.8. Ապրանք

Քաթերփիլար կամ այլ մակնիշի շինարարական, հանքարդյունաբերական կամ գյուղատնտեսական տեխնիկայի պահեստամասեր, նյութեր, յուղեր և այլն:

### 1.9. Աշխատանք(ներ)

Պատվիրատուի գրավոր պատվերի հիման վրա իրականացվող Պատվիրատուի սարքավորումների ընթացիկ տեխնիկական սպասարկում, ախտորոշում, լրացուցիչ սարքավորումների և աքսեսուարների տեղադրում (մոնտաժում), պլանային և չպլանավորված նորոգումներ:

### 1.10. Սարքավորում

Պատվիրատուին պատկանող շինարարական,

## 1. Definitions

The Parties acknowledge that the following terms in these General Provisions and Conditions have the following meanings:

### 1.1. Seller / Contractor

“Zeppelin Armenia” LLC, a company duly registered in the Republic of Armenia, state registration number: 286.110.05749, which acts in compliance with the legislation of the Republic of Armenia and its charter.

### 1.2. Buyer / Customer

Any person with whom the Application has been signed.

### 1.3. Party

Seller or Buyer in case of separate reference.

### 1.4. Parties

Seller and Buyer in case of joint reference.

### 1.5. GTC

This General Terms and Conditions.

### 1.6. Application

A document signed between Seller and Buyer, according to which the Buyer joins the GTC. Buyer's information, payment terms, details of the authorized person of the Buyer and other necessary information and condition as agreed by the Parties are stipulated in the Application.

### 1.7. Contract

The Application signed between the Parties, GTC and other annexes and agreements signed between the Parties related to the same subject matter as a whole.

### 1.8. Goods

Spare parts, consumables, oil related to the construction, mining or agricultural equipment of Caterpillar or other branch.

### 1.9. Work(s)

Maintenance, diagnostic works, installation of additional equipment and accessories, scheduled and off-scheduled repair of equipment performed based on the written orders of the Customer on the Customer's equipment.

### 1.10. Equipment

Construction, mining, agricultural or other type of

հանքարդյունաբերական, գյուղատնտեսական կամ այլ տեխնիկա, այդ թվում ուժային համակարգեր (գեներատոր) որոնց վրա Կատարողի կողմից Պայմանագրով սահմանված կարգով իրականացվում են Աշխատանքներ:

### 1.10. Օր

Օրացուցային օր, ինչը հավասար է 24 (քսանչորս) ժամի:

## 2. Պայմանագրի առարկան

2.1. Սույն ԸԴՊ-ն հանդիսանում է հրապարակային առաջարկ (օֆերտա) հրապարակված Վաճառողի պաշտոնական վեբկայքում ([www.zepelin.am](http://www.zepelin.am)) և Գնորդի կողմից ընդունվում է միայն դրանց ամբողջությամբ միանալով: Սույն ԸԴՊ-ն կարգավորում է Վաճառողի կողմից Ապրանքի վաճառքի, ինչպես նաև Կատարողի կողմից Պատվիրատուի Սարքավորումների վրա իրականացվող Աշխատանքների ընդհանուր կարգն ու պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Կողմերի պատասխանատվությունը իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար և Պայմանագրի լուծման կարգը:

2.2. ԸԴՊ-ն ընդունելու պահից, սույն ԸԴՊ-ն և Հայտը միասին հանդիսանում են Պատվիրատուի և Կատարողի միջև կնքված պարտադիր ուժ ունեցող Պայմանագիր: ԸԴՊ-ն համարվում է Պատվիրատուի կողմից ընդունված հայտը ստորագրելով:

2.3. Վաճառողը հանձնում է Ապրանքը Գնորդին Վաճառողի պահեստում՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 2-րդ արտադրական թաղամաս, թիվ 4 հասցեում, եթե այլ բան նախատեսված չէ գրավոր Կողմերի միջև:

2.4. Ապրանքը հանձնվում է անձամբ Գնորդին կամ Գնորդի կողմից լիազորված անձին, որի տվյալները պետք է նշվեն Հայտում: Հայտում նշված Գնորդի լիազորված անձը իրավունք ունի Գնորդի անունից ստանալ Ապրանքը և դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը: Գնորդը իրավունք ունի փոփոխել իր լիազորված անձին, նոր Հայտ ստորագրելու կամ առանձին լիազորագիր Վաճառողին ներկայացնելու միջոցով:

2.5. Ապրանքի հանձնման ժամանակ Վաճառողը Գնորդին կամ Գնորդի լիազորված անձին տրամադրում է Ապրանքի հարկային հաշիվ, որտեղ նշվում է նաև Ապրանքի տեսականին, կոնկրետ անվանումը, քանակը, գինը և (կամ) այլն:

2.6. Աշխատանքները իրականացվում են Հավելված 3-ով սահմանված ձևով Պատվիրատուի պատվերների հիման վրա: Պատվիրատուն պատվերը ձևակերպվում է գրավոր և փոխանցվում այն Կատարողին անձամբ կամ էլեկտրոնային փոստի միջոցով: Պատվերը պետք է ստորագրված լինի Կատարողի կամ Հայտում նշված վերջինիս լիազորված անձի կողմից:

2.7. Աշխատանքների կատարման վայրը Սարքավորման գտնվելու վայրն է, որը նշվում է հայտում, բացառությամբ

equipment, including power systems (generator) of Customer on which Works are performed by the Contractor according to the Contract.

### 1.10. Day

Calendar day equal to 24 (twenty-four) hours.

## 2. Subject of the Contract

2.1. This GTC are a public offer published on the official site of the Seller ([www.zepelin.am](http://www.zepelin.am)) which may be accepted by the Buyer only acceding to them in full. These GTC regulate the general procedure and conditions of sale of the Goods by the Seller, performance of Works by the Contractor on the Equipment of the Customer, rights and obligations of the Parties, responsibility of the Parties in case of any failure to fulfill or improper fulfillment of their liabilities and the Contract's termination procedure.

2.2. Upon accepting GTC, these GTC and Application shall constitute a binding contract concluded between the Seller and Buyer. The GTC shall be considered accepted by the Customer upon signing the Application.

2.3. The Seller shall transfer the Goods to the Buyer at the Seller's warehouse (address: Armenia, 2201, Kotayk Marz, Abovyan, 2<sup>nd</sup> Artadrakan District, № 4), unless agreed otherwise in written by the Parties.

2.4. The Goods are transferred to the Buyer itself, or to the authorized person of the Buyer, which should be stated in the Application. The authorized person of the Buyer stated in the Application is entitled to accept the Goods on behalf of the Buyer. The Buyer may change its authorized person by signing a new Application or issuing the Seller a separate power of attorney.

2.5. In the process of the Goods transferring, the Seller provides to the Buyer or Buyer's authorized person the Goods tax invoice, where the Goods type is also specified, as well as name, quantity, price and (or) other.

2.6. The Works are performed based on the Customer's orders made according to the Annex 3 herein. The Customer issues order in a written form and passes it either directly to the Contractor or via email. The order shall be signed by the Customer or by the authorized person stated in the Application.

2.7. The Works' performance site is the location of the Equipment specified in the order, except for the

այն դեպքերի, երբ Աշխատանքը կարող է իրականացվել միայն Կատարողի սպասարկման կենտրոնի պայմաններում:

2.8. Բոլոր տիպի Աշխատանքները իրականացվում են Պատվիրատուի կողմից Կատարողից ձեռք բերված նոր Ապրանքների օգտագործմամբ:

### 3. Ապրանքի գինը և վճարման կարգը

3.1. Ապրանքի գինը նախապես համաձայնեցվում է կողմերի միջև, որը ներառում է ավելացված արժեքի հարկի գումարը: Վաճառվող Ապրանքի գինը սահմանվում է Վաճառողի կողմից այդ Ապրանքի համար տրամադրվող հարկային հաշվում:

3.2. Աշխատանքների գները որոշվում են համաձայն Կողմերի միջև ստորագրված և Պայմանագրի անբաժան մաս կազմող գնացուցակի (այսուհետ՝ Գնացուցակ): Գնացուցակի ձևը սահմանված է Հավելված 6-ում:

Գնորդը իրականացնում է Ապրանքի կամ Աշխատանքների համար վճարում Վաճառողի հարկային հաշվում նշված բանկային հաշվարկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

3.3. Ապրանքի և / կամ Աշխատանքների համար վճարումը կատարվում է ըստ Հայտում սահմանված կարգի հետևյալ երկու վճարման պայմաններից մեկով՝

3.3.1. կանխավճարային կարգով, մինչև Ապրանքի հանձնում ընդունումը և / կամ Աշխատանքների կատարումը սկսելը:

3.3.2. հետվճարային կարգով, Ապրանքի և / կամ Աշխատանքների հարկային հաշվի դուրս գրման պահից սկսած Հայտում նշված ժամկետի ընթացքում: Միաժամանակ Գնորդի համար սահմանվում է կրեդիտային սահմանաչափ, որը յուրաքանչյուր պահի դրությամբ Վաճառողին վաճառված Ապրանքի և կատարված Աշխատանքի գծով պարտավորության առավելագույն գումարի չափն է: Կրեդիտային սահմանաչափը լրանալու դեպքում Վաճառողը պարտավոր է մարել իր պարտավորությունը, հակառակ դեպքում Գնորդին կասեցվում է հետագա Ապրանքի վաճառքը:

3.4. Գնորդը պարտավոր է Վաճառողի կողմից ներկայացված հարկային հաշիվը վավերացնել այն ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Նշված ժամկետի ընթացքում հարկային հաշիվը չվավերացնելու և այդ մասին գրավոր առարկություններ չներկայացնելու դեպքում, տվյալ հարկային հաշիվը համարվում է Գնորդի կողմից վավերացված անկախ հարկային հաշիվը փաստացի վավերացնելու հանգամանքից:

3.5. Վաճառողը իրավունք ունի ցանկացած պահի միակողմանի փոփոխել վճարման պայմանը՝ հետվճարայինից փոխելով կանխավճարային կարգի, այդ մասին Գնորդին ծանուցելու պայմանով: Այս դեպքում վճարման կարգը համարվում է փոփոխված ծանուցման պահից, եթե ծանուցմամբ ավելի երկար ժամկետ նախատեսված չէ:

cases, when the Works can be performed only in the conditions of the Contractor's technical center.

2.8. All types of Works are performed by the new Goods purchased by the Customer from the Contractor.

### 3. Price of the Goods and terms of Payment

3.1. The price for the Goods shall be agreed upon in advance by the parties, and shall include value added tax. Price for the Goods is determined in the tax invoice provided by the Seller for these Goods.

3.2. The price of the Works is determined based on the Price List, which is considered as inseparable part of the Contract (hereinafter Price List). The template of the Price is list is stated in Annex 6 herein.

The Buyers shall make relevant bank transfer payment for the Goods or Works, at the bank account number specified in the tax invoice.

3.3. The payment for the Goods and / or Works shall be made according to the order set out in the Application based on one of the payment terms below:

3.3.1. by prepayment, before delivery of the Goods and / or start of the Works performance,

3.3.2. by post-delivery payment, within the period mentioned in the Application upon issuing of the invoice of the Goods and / or Works. Meantime a credit limit is set for the Buyer, which is the total amount due for the Goods sold and Works performed by the Seller to the Buyer based on the invoices for any moment of time. In case of the Buyer exceeds the credit limit, the Buyer is obliged to make it's payment obligation, otherwise the future sale of the Goods to the Buyer is suspended.

3.4. The Buyer is obliged to ratify the invoice provided by the Seller within 3 (three) working days after receiving it. If the Buyer fails to ratify the invoice within the mentioned time period and doesn't provide written objections on that, the given invoice shall be considered to be ratified by the Buyer, notwithstanding the actual ratification of the invoice by the Buyer.

3.5. The Seller is entitled at any moment to unilaterally change the payment term from post-delivery payment to prepayment, by giving the Buyer a notice. In this case the payment term is considered to be changed from the date of the notice, unless a later date is specified in the notice.

3.6. Ապրանքի սեփականության իրավունքը Վաճառողից փոխանցվում է Գնորդին (նրա լիազորված անձին) Ապրանքի դիմաց հարկային հաշիվը դուրս գրելու պահից:

3.7. Ապրանքի պատահական կորստի, պատահական վնասվածքի ռիսկերը, ինչպես նաև Ապրանքի միջոցով երրորդ անձանց հասցվող վնասների պատասխանատվությունը Գնորդին են անցնում EXW (Ինկոթերմս 2010) պայմանով ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 2-րդ արտադրական թաղամաս, թիվ 4 Վաճառողի պահեստ հասցեում:

3.8. Աշխատանքները ավարտելուց հետո, Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում Ընդունման ակտ: Ընդունման ակտի նմուշը ներկայացված է Հավելված 4-ում: Կատարողը խելամիտ ժամկետներում տեղեկացնում է Պատվիրատուին աշխատանքների հանձնման տեղի և ժամի մասին, իսկ Պատվիրատուն պարտավոր է ապահովել իր լիազորված անձի ներկայությունը:

3.9. Պատվիրատուի լիազոր ներկայացուցիչը ստուգում է կատարված Աշխատանքը: Եթե Պատվիրատուի լիազոր ներկայացուցիչը խնդիրներ չի հայտնաբերում, ապա Պատվիրատուն ստորագրում է Ընդունման ակտը: Ստորագրման պահից Կատարողի պարտականությունները համապատասխան Աշխատանքի առնչությամբ համարվում են պատշաճ կերպով կատարված: Եթե Պատվիրատուն չի ստորագրում Ընդունման ակտը այն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում և նույն ժամանակահատվածում գրավոր առարկություն չի ներկայացնում, նշված Ընդունման ակտը համարվում է ստորագրված Պատվիրատուի կողմից, անկախ նրանից, թե Պատվիրատուն փաստացի ստորագրել է այն, թե ոչ:

#### 4. Երաշխիքային ժամկետ

4.1. Քաթերփիլլար արտադրության Ապրանքի համար Վաճառողի տված երաշխիքը սահմանված է Հավելված 2-ում:

4.2. Կատարողը սահմանում է երաշխիքի 6-ամսյա ժամկետ իրականացված Աշխատանքների համար, այն պայմանով, որ Պատվիրատուն պահպանել է Մարքավորման շահագործման պահանջները և տեխնիկական փաստաթղթերը:

4.3. Կատարողը պատասխանատվություն է կրում կատարված Աշխատանքների որակի համար այն պայմանով, որ Պատվիրատուն ապահովել է հետևյալ պայմանները.

ա/ շահագործման ընթացքում օգտագործվել է Մարքավորման համար հանձնարարված վառելիքը, յուղը, օդային ֆիլտրերը, որոնք նշված են տվյալ Մարքավորման Պահեստամասերի արտադրողի կատալոգում և համապատասխանում են դրան:

բ/ շահագործմանը ու սպասարկմանը վերաբերող ցուցումների համաձայն շահագործման ընթացքում օգտագործվել են Մարքավորման արտադրողի կողմից հանձնարարված շարժիչի յուղերը:

3.6. Property right for the Goods is transferred from the Seller to the Buyer (or to the authorized person) at the moment of issuing tax invoice for the Goods.

3.7. The risk of the accidental loss or damage of the Goods, as well as responsibility for harm caused by the Goods to third parties, by the EXW (Incoterms 2010) condition at: Armenia, 2201, Kotayk Marz, Abovyan, 2<sup>nd</sup> Artadrakan District, № 4 at the address of the Seller's warehouse.

3.8. After finishing the Works, the Contractor presents to the Customer Act of Acceptance. The template of the Act of Acceptance is set by the Annex 4. of the Contract. The Contractor, within reasonable time informs the Customer about the date, location and time of delivering the Work and the Customer shall ensure the presence of his authorized representative.

3.9. The Customer's authorized representative shall inspect the work. If no outstanding issues are found by the Customer's authorized representative, the Customer shall sign the Act of Acceptance. From the moment of signing the obligations of the Contractor regarding the relevant Work order are considered as duly performed. In case the Customer doesn't sign the Act of Acceptance within FIVE (5) working days after receiving it and doesn't provide a written objection within the same period, the given Act of Acceptance shall be considered to be signed by the Customer, notwithstanding the actual signing of it by the Customer.

#### 4. Warranty

4.1. Seller's warranty in respect of the Caterpillar produced Goods is attached hereto as Annex 2.

4.2. The Contractor shall set a Warranty of SIX (6) months for the performed Works provided that the operating instructions requirements and technical documentation of the Equipment are met by the Customer.

4.3. The Contractor bears responsibility for the Quality of the performed Works provided that the Customer fulfils the following conditions:

a) The fuel, oil, air filters recommended for usage on the Equipment as specified in and in accordance with the Manufacturer's Catalogue of spare parts for this unit of Equipment are used during operations;

b) Engine oils recommended by Equipment manufacturers in accordance with the operating and service instructions are used during operations;

զ/ շահագործմանը ու սպասարկմանը վերաբերող ցուցումների համաձայն շահագործման ընթացքում օգտագործվել են Սարքավորման արտադրողի կողմից հանձնարարված հովացնող հեղուկները:

դ/ Սարքավորման տվյալ հանգույցի յուրի ու ֆիլտրի փոխարինումը իրականացվել է շահագործման ու սպասարկման ցուցումների համաձայն:

ե/ Պատվիրատուն արտադրողի կամ նրա ներկայացուցչի կողմից չթույլատրված Սարքավորման որևէ փոփոխություն չի իրականացրել:

զ/ սպասարկման և նորոգման Աշխատանքների ընթացքում Կատարողի կողմից տրամադրվել են միայն օրիգինալ պահեստամասեր կամ ծախսվող նյութեր, եթե միայն այլ ծագում ունեցող մասերի օգտագործման մասին գրավոր համաձայնագիր չի ստորագրվել:

4.4. Կատարողը ազատվում է երաշխիքային պարտավորություններից, եթե.

ա/ խախտվում է սույն Պայմանագրի 4.3 կետի ենթակետերից որևէ մեկը:

բ/ Պատվիրատուի սպասարկող անձնակազմը որևէ գործողություն է իրականացնում, որը չի համապատասխանում պահպանման և սպասարկման ձեռնարկներին, եթե միայն Կողմերը այլ բանի մասին համաձայնության չեն եկել:

## 5. Կողմերի իրավունքները և պարտականությունները

### Վաճառողը պարտավոր է.

5.1. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

5.2. Գնորդին հանձնել պատշաճ որակի Ապրանք՝ համաձայն Պայմանագրի պայմանների:

5.3. Ապրանքը հանձնելու հետ միաժամանակ Գնորդին հանձնել Ապրանքին և դրա որակին վերաբերող բոլոր փաստաթղթերը և Ապրանքի բոլոր պատկանելիքները, եթե այդպիսիք կան:

### Վաճառողն իրավունք ունի.

5.4. Պահանջել Գնորդից ընդունել Ապրանքը.

5.5. Պահանջել վճարումը ընդունված Ապրանքի և կատարված Աշխատանքների համար.

5.6. Գնորդի կողմից Պայմանագրով նախատեսված վճարման ժամկետի կետանցի դեպքում պահանջել վճարել համապատասխան գումարը, ինչպես նաև տույժ դրա 0,1%-ի չափով յուրաքանչյուր ուշացված օրվա համար, բայց ոչ ավելի քան դրա 5%:

5.7. Կասեցնել Ապրանքի հետագա վաճառքը Գնորդին կամ Աշխատանքների կատարումը, եթե Գնորդը խախտել է Ապրանքի և / կամ Աշխատանքների դիմաց վճարման ժամկետը կամ լրացել է Կրեդիտային սահմանաչափը:

### Գնորդը պարտավոր է.

5.8. Կատարել բոլոր անհրաժեշտ գործողություններն Ապրանքի ընդունումն ապահովելու համար:

c) Cooling liquids recommended by the Equipment manufacturers in accordance with the operating and service instructions are used during operations;

d) the replacement of oil and filter of the given unit of Equipment is done according to the operating and service instructions;

e) The Customer does not make any Equipment modifications not sanctioned by the manufacturer or his representative;

f) During maintenance and repair Works, only original spare parts or consumable materials are provided by the Contractor unless previous written agreement has been signed to utilize parts sourced elsewhere.

4.4. The Contractor shall be released from warranty commitments in the following cases:

a) Breach of one of the sub-points of the point 4.3 of this Contract;

b) Other activities of the Customer's service personnel not in accordance with the operations maintenance and service manuals, unless mutually agreed to by both parties.

## 5. Rights and Obligations of the Parties

### The Seller shall be obliged to:

5.1. Transfer the Goods, free of third party rights, to the ownership of the Buyer.

5.2. Transfer the Goods of the quality complying with the conditions specified in the Contract.

5.3. Simultaneously with the Goods delivering to pass to the Buyer all documents related to the Goods and their and all the Goods belongings, if any.

### The Seller shall have the right to:

5.4. Demand that the Buyer accept the Goods.

5.5. Demand payment for the accepted Goods and performed Works.

5.6. Should the Buyer fail to pay on time within the terms of payment specified by this Contract, to request that the Buyer pay the required sum of money, as well as the fine amounting 0.1% of that sum for every day of delay, however not exceeding 5% of it.

5.7. Suspend the further sale of the Goods or to the Buyer Works performance in case the Buyer breaches the payment term of the Goods and/or Works or the Credit limit is exceeded.

### The Buyer shall be obliged to:

5.8. Implement all the necessary activities related to ensure the Goods acceptance.

- 5.9. Ապրանքի և Աշխատանքների համար վճարում կատարել Պայմանագրով նախատեսված կարգով
- 5.10. Թերի մատակարարում թույլ տալու դեպքում Գնորդը պետք է գրավոր ծանուցի Վաճառողին՝ ղեկավարվելով Հավելված 1-ով սահմանված ընթացակարգով:
- 5.11. Աշխատանքների կատարման համար Պատվիրատուն պարտավոր է՝
- 5.11.1. Աշխատանքները կատարելու նպատակով ապահովի Սարքավորման, ինչպես նաև Սարքավորման գտնվելու վայրի դժվար հասանելի տեղերի մատչելիությունը Կատարողի ներկայացուցիչների համար.
- 5.11.2. Աշխատանքների իրականացման համար ապահովել Արտադրողի շահագործման ու սպասարկման ձեռնարկների պահանջները, ինչպես նաև աշխատանքի և հակահրդեհային անվտանգության կանոններին:
- 5.11.3. Սարքավորումները պետք է մաքուր վիճակում լինեն:
- 5.11.4. Կատարողին պետք է հնարավորություն ընձեռնվի օգտագործել համաձայնեցված օժանդակ սարքավորումներ /ամբարձիչներ, մարդատար վերելակներ և այլն/ և այդ սարքավորումները շահագործող աշխատակազմ, ներառյալ Կատարողի պահանջի դեպքում էլեկտրականության մատակարարումը և գործիքների տրամադրումը, այդպիսի սարքավորումների և միջոցների անհրաժեշտության դեպքում:

**Գնորդն իրավունք ունի.**

- 5.12. Պահանջել իրեն հանձնել Ապրանքը և կատարել Աշխատանքները:
- 5.13. Հրաժարվել Ապրանքը և / կամ Աշխատանքը ընդունելուց, եթե չի համապատասխանում Պայմանագրի պայմաններ:

**6. Ծանուցումներ**

Պայմանագրի շրջանակներում ուղարկվող բոլոր ծանուցումները պետք է կազմված լինեն գրավոր հայերեն կամ անգլերեն լեզվով և առաքվեն առձեռն, սուրհանդակային ծառայության կամ էլեկտրոնային փոստի միջոցով. Գնորդին ուղարկվելու դեպքում Հայտում նշված հասցեներով, Վաճառողին ուղարկվելու դեպքում ԸԴՊ-ում նշված հասցեներով: Առձեռն առաքման դեպքում ծանուցումները համարվում են ստացված հասցեատիրոջը հանձնելու օրը (առձեռն առաքման դեպքում հասցեատերը տալիս է համապատասխան ստացական), սուրհանդակային ծառայության միջոցով առաքված լինելու դեպքում ծանուցումը համարվում է ստացված սուրհանդակային ծառայության՝ առաքման ստացականում նշված օրը, իսկ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցելու դեպքում՝ էլեկտրոնային նամակը ուղարկողի փոստարկից դուրս գալու օրը: Կողմերը վերոհիշյալ ծանուցման կարգով միմյանց ծանուցելով կարող են

- 5.9. Make payment for the Goods and Works according the procedures envisaged by the Contract.
- 5.10. In case of incomplete delivery of the Goods, the Buyer shall notify the Seller in written, guiding by the procedures specified in Annex 1 hereto.
- 5.11. For the performance of the Works, the Customer shall be obliged to provide:
- 5.11.1. Contractor’s representatives access to the Equipment for performing the Works specified by this Contract, as well as to any hard-to-reach places the Equipment is located
- 5.11.2. Ensure the requirements of the operations and maintenance Manual of the Manufacturer, and safety standards and fire safety regulations;
- 5.11.3. The Equipment in a clean condition;
- 5.11.4. The Contractor shall be granted access to agreed accessory equipment (lifting cranes, man-lift, etc.) and personnel for the operation of such equipment, including power supply and tooling when requested by the Contractor, if there is need for such equipment and means

**The Buyer shall have the right to:**

- 5.12. Demand transfer of the Goods and performance of the Works.
- 5.13. Refuse to accept the Goods if they are not comply with requirements of the Contract.

**6. Notices**

All notices hereunder shall be in writing in Armenian or English languages and shall be delivered in person, by courier or by email to the respective Parties at the addresses set forth in the Application, in case addressed to the Seller, and in GTC in case addressed to the Buyer. Notice shall be deemed given, respectively, on the date of delivery in person with receipt acknowledged, on the date indicated on the courier delivery acknowledgment, or on the date of the email is sent out from the outbox of the sender in case of notice by email. Any party may change its address for notice by a notice duly given as aforesaid.

փոխել ծանուցման նպատակով ստորև ներկայացված հասցեները:

**Վաճառողին ծանուցելիս ծանուցումներն ուղարկվում են հետևյալ հասցեով.**

«ՑԵՊԵԼԻՆ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ  
Իրավաբանական հասցեն` ՀՀ, ք. Աբովյան 2201, 2-րդ արտադրական թաղամաս, թիվ 4  
հեռ. +374 (60) 60 52 00 00  
Էլեկտրոնային փոստի հասցե` armenia@zeppelin.com

**7. Հավելվածներ**

7.1. Ստորև նշված հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժան մասը.  
Հավելված 1 - Պահանջների ներկայացման կարգը  
Հավելված 2 - Երաշխիք  
Հավելված 3 - Աշխատանքի կատարման պատվերի ձև  
Հավելված 4 - Աշխատանքի ընդունման ակտի ձև  
Հավելված 5 - Սարքավորումների ցանկի ձև  
Հավելված 6 - Աշխատանքների գնացուցակի ձև

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը**

8.1. Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում կողմերը կազատվեն պատասխանատվությունից, եթե պարտավորությունների չկատարումը տեղի է ունեցել պատերազմների, քաղաքացիական հուզումների, հեղափոխությունների, հրդեհների, ջրհեղեղների և այլ տարերային աղետների, կառավարության որոշումների կամ ողջամտորեն կողմերի վերահսկողությունից դուրս գտնվող ցանկացած այլ իրադարձությունների հետևանքով:

Պարտավորությունների կատարման ժամկետը նման պարագայում երկարաձգվում է նման իրադարձությունների առկայության ժամանակով և դրան ավելացված ևս 10 աշխատանքային օրով:

Վաճառողը և Գնորդն իրավունք ունեն գրավոր ծանուցմամբ (ուղարկվում է նամակով, ծանուցումը ստանալու դեպքում ստացող կողմը պետք է այդ մասին տեղյակ պահի ուղարկող կողմին) լուծել Պայմանագիրը կամ համապատասխան պատվեր-հայտը, եթե Պայմանագրով Վաճառողի ստանձնած պարտավորությունների կամ դրանց մի մասի կատարումը նման իրադարձությունների առկայության հետևանքով հետաձգվում է երեք ամսից ավել ժամկետով: Պայմանագրի նման լուծումը որևէ պատասխանատվություն չի առաջացնում կողմերից որևիցե մեկի համար բացառությամբ հետևյալի. Գնորդը պարտավոր է վճարել Վաճառողին մատակարարված Ապրանքի դիմաց, իսկ Վաճառողն էլ պարտավոր է Գնորդին վերադարձնել 3 կետի համաձայն վճարված բոլոր այն գումարները, որոնց դիմաց առաքումներ չեն կատարվել:

**9. Երաշխավորություններ**

**If to Seller:**

ZEPPELIN ARMENIA LLC  
Legal address: 2 Artadrakan district, block 4, c. Abovyan 2201, RA  
Tel: +374 (60) 52 00 00  
Email address: Armenia@zeppelin.com

**7. Annexes**

7.1. The following Annexes shall form an integral part of the Contract:  
Annex 1 - Procedure for Filing Claims  
Annex 2 - Warranty  
Annex 3 - Order of Work Performance (template)  
Annex 4 - Act of Acceptance of Works (template)  
Annex 5 - The list of Equipment (template)  
Annex 6 - The price list of Work (template)

**8. Force majeure**

8.1. Performance by Parties of any of its obligations under the Contract is subject to wars, riots, revolutions, fires, floods, or other acts of God, governmental actions, or any other cause beyond the reasonable control of Parties. Any such cause shall absolve the party from any liability.

The time for performance shall be extended for a period equal to the duration of such cause plus 10 (ten) working days.

If performance by Seller of all or a part of the Contract is delayed by any such cause for more than 3 (three) months, either Seller or Buyer shall have the right to terminate the Contract or the appropriate order upon written notice to be sent by mail with receipt acknowledged and without liability of any kind to the other party with respect to any incomplete performance, except that Buyer shall pay Seller for all delivered the Goods, and the Seller shall return to the Buyer all payments made by the latter in respect of the Goods not delivered pursuant to Point 3

**9. Representation warranties**

9.1. Կողմերը երկուստեք միմյանց հայտնում են, որ իրենցից յուրաքանչյուրը Պայմանագրի ստորագրման պահին ՀՀ օրենքների համաձայն պատշաճ կերպով գրանցված և գործող ընկերություն է, որն իրավունք ունի ունենալ առանձնացված գույք և ինքնուրույն գործունեություն իրականացնել այդ թվում նաև կնքել և կատարել Պայմանագիրը, և որ իրենցից յուրաքանչյուրի անունից պայմանագիրը ստորագրող անձիք օժտված են համապատասխան լիազորություններով:

9.2. Վաճառողը երաշխավորում է, որ Պայմանագիրը կնքելու պահին իր պահեստում առկա Ապրանքի վրա բռնագանձում կամ բռնագրավում տարածված չէ, այն գրավի, արգելանքի, կալանքի տակ չի գտնվում:

9.3. Վաճառողի պահանջի դեպքում Գնորդը պարտավոր է վերջինիս տրամադրել իր վերաբերյալ Քաղվածք Իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից: Գնորդը միաժամանակ պարտավոր է Վաճառողին ծանուցել իր գործադիր մարմնի ղեկավարի և/կամ մասնակիցների/բաժնետերերի ցանկացած փոփոխության վերաբերյալ, նախապես կամ նման փոփոխության գրանցման պահից ոչ ուշ քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

## 10. Կողմերի պատասխանատվությունը

10.1. Չնայած Պայմանագրում (ներառյալ երաշխիքը) կամ նրա մասը կազմող որևէ փաստաթղթերում բովանդակվող հակասությունների, Վաճառողի պատասխանատվության ընդհանուր գումարը, Պայմանագրի հիման վրա, կամ որևիցե այլ հիմքով, սահմանափակվում է 1,000,000.0 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով, բացառությամբ այն դեպքերի, երբ պատասխանատվության հիմք է հանդիսացել կոպիտ անփութությունը կամ միտումնավոր գործողությունները:

